ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 361 – Ա

05 դեկտեմբերի 2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N 30-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի փետրվարի 19-ի N 30-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետով հաստատված հավելված թիվ 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2017 թվականի դեկտեմբերի 5 -ի
N 361-Ա որոշման

<<Հավելված թիվ 1
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2017 թվականի փետրվարի 19 -ի
N 30-Ա որոշմանմբ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության (այսուհետ՝ Բաժին) կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, <<Քաղաքացիական ծառայության մասին>>, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>>, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին>>, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասի>> Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով և կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի (այսուհետ՝ Մարզպետ) որոշումներով և կարգադրություններով, Աշխատակազմի ղեկավարի հրամաններով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Բաժնի լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերով:

3. Բաժինը կազմավորում, վերակազմակերպում և նրա գործունեությունը դադարեցնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Բաժնի կանոնադրությունը հաստատում (փոփոխում) է Մարզպետը:

II. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. Բաժինն իր լիազորությունների շրջանակներում՝

1) ապահովում է մարզի զարգացման ծրագրերի մշակման, քննարկման և հաստատման աշխատանքների կատարումը.

2) ապահովում է մարզի զարգացման ծրագրերի ներդաշնակեցումը Հայաստանի Հանրապետության կառավարության երկարաժամկետ և միջնաժամկետ ռազմավարական ծրագրերին՝ հաշվի առնելով մարզի սոցիալ-տնտեսական վիճակի առանձնահատկությունները.

3) ապահովում է մարզային նշանակության նպատակային ծրագրեր իրականացնող միջազգային և այլ դոնոր կազմակերպությունների ու ծրագրերի հետ համագործակցությունը.

4) յուրաքանչյուր տարվա համար ամփոփում է նախորդ տարվա ծրագրերի կատարողականի վերլուծությունը և կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ Աշխատակազմի ղեկավարի միջոցով Մարզպետի հաստատմանն է ներկայացնում ըստ ոլորտների զարգացման տարեկան ծրագիրը.

5) ապահովում է մարզային զարգացման ծրագրերի հրապարակայնությունը, գերակայությունների սահմանման թափանցիկությունը և դրանց մշակման մասնակցությունը.

6) իրականացնում է ծրագրային քաղաքականության վերլուծություն, ցուցանիշների և թիրախների վերհանում և ազդեցությունների գնահատում.

7) ապահովում է մարզի սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը Մարզպետին.

8) ապահովում է իրեն վերապահված Մարզպետարանի ինտերնետային էջի սպասարկումը՝ իրազեկելով ազգաբնակչությանը մարզի զարգացման ծրագրերի վերաբերյալ.

9) ապահովում է Մարզպետի և Աշխատակազմի ղեկավարի մոտ զարգացման ծրագրերի շուրջ անցկացված խորհրդակցությունների, հանդիպումների կազմակեպման աշխատանքները և դրանց ընթացքում տրված հանձնարարականների կատարումը.

10) ապահովում է մարզի, մարզի համայնքների և այլ երկրների համապատասխան տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության աշխատանքների կազմակերպումը, ցուցաբերում է աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին համայնքային զարգացման ծրագրերի կազմման գործընթացում.

11) ապահովում է մասնավոր հատվածի, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված համագործակցության կազմակերպումը.

12) ապահովում է զարգացման ծրագրի մոնիտորինգի և գնահատման աշխատանքների իրականացում.

13) ապահովում է մարզային ենթակառուցվածքների (ճանապարհներ, ջրային տնտեսություն, գազամատակարարում և այլն) զարգացմանն ուղղված ծրագրերի մշակումը և նպաստում դրանց իրականացմանը.

14) ապահովում է գյուղատնտեսության, բնապահպանության, արդյունաբերության ոլորտների զարգացման գերակայությունների, զարգացման միտումների վերլուծությունն ու այդ ոլորտների զարգացմանն ուղղված ծրագրերի մշակումը և նպաստում դրանց իրականացմանը.

15) ապահովում է սոցիալական ոլորտի (կրթություն, առողջապահություն, մշակույթ, սպորտ և սոցիալական պաշտպանություն) զարգացման միտումների ու գերակայությունների որոշումը և ոլորտների զարգացմանն ուղղված ծրագրերի մշակումը և նպաստում դրանց իրականացմանը.

16) ապահովում է քաղաքաշինության ոլորտի զարգացման միտումներն ու գերակայությունների որոշումը և զարգացմանն ուղղված ծրագրերի մշակումը և նպաստում դրանց իրականացմանը.

17) ապահովում է ոլորտին վերաբերող տեղեկատվական հոսքերի կառավարումը՝ համայնքներից, հասարակական և մասնագիտական կառույցներից ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն նրանց կողմից իրականացվող ծրագրերի մասին՝ մարզային զարգացման տեղեկատվական բազան համալրված վարելու, ինչպես նաև Մարզպետի զարգացման ծրագրի իրականացման մասին տարեկան հաշվետվությունը նախապատրաստելու և ներկայացնելու համար:

18) համակարգում, աջակցում է մարզի համայնքների հնգամյա զարգացման ծրագրերի կազման գործընթացում:

19) համակարգում, աջակցում է մարզի սոցիալական աջակցության պետական ծրագրերին, ծառայություններ տրամադրող կազմակերպություններին սոցիալական ծրագրեր իրականացնելիս:

20) ապահովում է մասնակցությունը մարզում զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքներին.

21) ապահովում է մարզում զբոսաշրջության ոլորտի վիճակագրական և այլ վերլուծությունների իրականացման, համապատասխան առաջարկությունների և հաշվետվությունների մշակման և լիազոր պետական մարմնին ներկայացման աշխատանքները.

22) ապահովում է մասնակցությունը զբոսաշրջության ոլորտի գրանցամատյանների կազմման, վարման, թարմացման, վարչական ռեգիստրի ներդրման, վարման և տեղակատվական բազայի (այդ թվում՝ սոցիալական փաթեթի հանգստի ապահովման) ստեղծման գործընթացներին.

23) մարզպետի հանձնարարությամբ ներկայացնում է մարզը այլ երկրների համապատասխան մարմինների և միջազգային զբոսաշրջային կազմակերպությունների հետ հարաբերություններում.

III. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

1. Բաժինն իր գործունեությունն իրականացնում է Մարզպետարանի հաստիքացուցակով նախատեսված կազմով:

2. Բաժնի կառավարումն իրականացնում է Մարզպետը:

3. Բաժնի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Աշխատակազմի ղեկավարը:

4. Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Բաժնի վարիչը:

5. Բաժնի վարիչի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, քաղաքացիական ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթները սահմանվում է նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:>>:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ